ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2026 թ. N 324-Ա

«ԳԼԱԶՈՐ ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման և հաշվի առնելով «Գլաձոր առողջարան» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Դավիթ Պետրոսյանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՇԹԴ/705/23610-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի սեպտեմբերի 16-ի N 1619)՝ ***որոշում եմ***՝

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 15-ի N 109-Ա որոշմամբ «Գլաձոր առողջարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չի ավարտվել, սակայն իրավասու մարմնի՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կողմից կառուցապատողին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և կառուցապատումն ավարտելու վերաբերյալ օրենքով նախատեսված գրավոր նախազգուշացում չի տրամադրվել, «Գլաձոր առողջարան» առողջարան ՍՊ ընկերության կողմից ներկայացված 2026 թվականի սեպտեմբերի 10-ի ՇԹԴ/705/23610-26 դիմումը բավարարել:

2. Երկարաձգել «Գլաձոր առողջարան» ՍՊ ընկերությանը 2024 թվականի ապրիլի 15-ին տրված N 4 շինարարության թույլտվությամբ սահմանված՝ Ջերմուկ քաղաքի Մելիք Ադամյան փողոցի N 1 հասցեում գտնվող 10-002-0019-0006 կադաստրային ծածկագրով հողամասում առողջարանի շենքի վերակառուցման շինարարության ժամկետը՝ մինչև 2028 թվականի սեպտեմբերի 16-ը:

3. «Գլաձոր առողջարան» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031609 հաշվեհամարին մուծել 14400000 (տասնչորս միլիոն չորս հարյուր հազար) դրամ՝ տեղական տուրք:

4. Սահմանել, որ կառուցապատողը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտել սույն որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետում և օրենսդրությամբ

սահմանված կարգով ստանալ կառուցապատման օբյեկտի շահագործման թույլտվությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային հարթակով «Գլաձոր առողջարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2026 թ. N 325-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ» ԱՌՈՂՋԱՐԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման և հաշվի առնելով «Ջերմուկի Նոր Կյանք» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Դավիթ Պետրոսյանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՇԹԴ/705/23517-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի սեպտեմբերի 16-ի N 1620)՝ ***որոշում եմ***՝

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 7-ի N 120-Ա որոշմամբ «Ջերմուկի Նոր Կյանք» Առողջարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չի ավարտվել, սակայն իրավասու մարմնի՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կողմից կառուցապատողին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և կառուցապատումն ավարտելու վերաբերյալ օրենքով նախատեսված գրավոր նախազգուշացում չի տրամադրվել, «Ջերմուկի Նոր Կյանք» առողջարան ՍՊ ընկերության կողմից ներկայացված 2026 թվականի սեպտեմբերի 10-ի ՇԹԴ/705/23517-26 դիմումը բավարարել:

2. Երկարաձգել «Ջերմուկի Նոր Կյանք» առողջարան ՍՊ ընկերությանը 2024 թվականի մայիսի 7-ին տրված N 5 շինարարության թույլտվությամբ սահմանված՝ Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 2 հասցեում գտնվող 10-002-0009-0011 կադաստրային ծածկագրով հողամասում հյուրանոցային համալիրի նոր առողջարանային մասնաշենքի կառուցման շինարարության ժամկետը՝ մին

3. «Ջերմուկի Նոր Կյանք» առողջարան ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031609 հաշվեհամարին մուծել 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) դրամ՝ տեղական տուրք:

4. Սահմանել, որ կառուցապատողը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտել սույն որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետում և օրենսդրությամբ

սահմանված կարգով ստանալ կառուցապատման օբյեկտի շահագործման թույլտվությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային հարթակով «Ջերմուկի Նոր Կյանք» Առողջարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2026 թ. N 326-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության՝ էլեկտրոնային հարթակով 2026 թվականի օգոստոսի 28-ին ստացված ՃՀԱ/699/25506-26 հայտը՝ (մտից N 1621, 16.09.2026 թ.)՝

որոշում եմ՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 34-րդ փողոցի N 23 հասցեում գտնվող 10-016-0212-0130 կադաստրային ծածկագրով հողամասի վրա պահեստային տարածք կառուցելու համար նախագծանախահաշվային փատաթղթերի մշակման նպատակով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը տալ նախագծման թույլտվություն:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2026 թ. N 327-Ա

ՊԱՐՈՒՅՐ ԲԱԴԱՍՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ N 23/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1-ին կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով Պարույր Բադասյանի՝ 2026 թվականի օգոստոսի 11-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՀՆ/5655-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի սեպտեմբերի 16-ի N 1622) և «ԱԳ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊ ընկերության Ե-39-26 երաշխավորագիրը՝ ***որոշում եմ***՝

1. Համաձայնություն տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2026 թվականի հունիսի 5-ին տրված N ՎՋ 2559/2026 տեխնիկական պայմանի ուղեգծով հետագիծ-նախագծային փաստաթղթերին և Ջերմուկ համայնքի բնակիչ Պարույր Սամվելի Բադասյանին տրամադրել Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի 4-րդ փակուղու N 23/1 հասցեում գտնվող սեփական հողամասում արտաքին ջրագծի և կոյուղագծի կառուցման աշխատանքներ կատարելու շինարարության թույլտվություն:

2. Պարույր Սամվելի Բադասյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պարույր Սամվելի Բադասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2026 թ. N 328-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 20-ի 286-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 25-րդ կետը՝ ***որոշում եմ***՝

1. 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք Ջերմուկ համայնքի ավագանու ընտրությունների քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար Ջերմուկ համայնքի տարածքում առանձնացնել անվճար վահանակներ՝ համաձայն հավելվածի:

2. Առանձնացված վահանակների վրա յուրաքանչյուր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար յուրաքանչյուր տեղում հատկացվում է մեկ A1 չափի 59,4 սմ լայնությամբ, 84,1 սմ բարձրությամբ տարածք, հորիզոնական դասավորվածությամբ ընդհանուր 0.5 քմ. մակերեսով՝ համաձայն կից գծագրի:

3. Սույն որոշման օրինակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ենթակա է ներկայացման Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ եռօրյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 16
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի
սեպտեմբերի 16-ի N 328-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈՋԶԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ, ՔԱՐՈՋԶԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՅՐԵՐ

բնակավայր	հասցե	տեղանքի գեոդեզիական կոորդինատները
քաղաք Ջերմուկ	Մաշտոցի փողոցի վրա, Ձախափնյակ թաղամասի 11-րդ շենքի հարակից հատված	39°48'52.4"N 45°40'19.6"E
քաղաք Ջերմուկ	Մաշտոցի փողոցի վրա, Ձախափնյակ թաղամասի 7-րդ շենքի հարակից հատված	39°48'59.2"N 45°40'17.9"E
քաղաք Ջերմուկ	Շահումյան և Բարեկամություն փողոցների խաչմերուկին կից (լուսացույցի մոտ)	39°50'25.3"N 45°40'13.5"E
գյուղ Գնդեվազ	5-րդ փողոցի վրա՝ փողոցի և դրա 5-րդ փակուղու խաչմերուկին կից	39°45'41.6"N 45°37'05.9"E
գյուղ Կեչուտ	1-ին փողոցի սկզբնամասում, կանգառին կից	39°48'21.4"N 45°40'13.9"E
վահանակները երկկողմանի են, յուրաքանչյուրի մակերեսը՝ 4 քմ (2,4 x1,8)		

գծագիր

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

25.10.2026 Թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ 59,4 սմ | 84,1 սմ	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ** 59,4 սմ | 84,1 սմ	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ** 59,4 սմ | 84,1 սմ	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ** 59,4 սմ | 84,1 սմ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ 59,4 սմ | 84,1 սմ	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ** 59,4 սմ | 84,1 սմ	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ** 59,4 սմ | 84,1 սմ	**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՎԱԶԴ** 59,4 սմ | 84,1 սմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2026 թ. N 329-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի N 71-Ա որոշման, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Աղասի Գերասիմի Հարությունյանի դիմումը (մտից՝ 2026 թվականի սեպտեմբերի 17-ի N 1634)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2026 թվականի սեպտեմբերի 11-ի N 11092026-10-0017 վկայական) Ջերմուկ քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի N 30/1 հասցեում գտնվող 24,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 55,2 քմ) շինությունը՝ խանութը, և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24,7 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Երևան քաղաքի բնակիչ Աղասի Գերասիմի Հարությունյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ 1673 (հազար վեց հարյուր յոթանասուներեք) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1673).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2887,5 (երկու հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) դրամ:

4. Աղասի Գերասիմի Հարությունյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 371910 (երեք հարյուր յոթանասունմեկ հազար իննը հարյուր տաս) դրամ՝ շինության գինը.

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝ 71325 (յոթանասունմեկ հազար երեք հարյուր քսաննինգ) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Աղասի Գերասիմի Հարությունյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աղասի Գերասիմի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2026 թ. N 330-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ N 3 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» ենթակետերով և հաշվի առնելով «Արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության՝ 2026 թվականի օգոստոսի 31-ին տրված շինության տեխնիկական վիճակի գնահատման վերաբերյալ N 26-764 եզրակացությունը և Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ալիսա Վարդգեսի Գևորգյանի դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 4-ի N 1340)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ալիսա Վարդգեսի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական N 22022022-10-0013, տրված 22.02.2022 թ.) Կեչուտ գյուղի 9-րդ փողոցի 1-ին փակուղու 3-րդ շենքի N 1 հասցեում գտնվող բնակարանին կից՝ ինքնակամ կառուցված 37,86 քմ մակերեսով կցակառույցը՝ բնակարանի մի մասը, բաց պատշգամբը և աստիճանավանդակը (այսուհետ՝ շինություն) համարել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության զբաղեցրած 37,86 քմ մակերեսով հողամասն, անհատույց բաժնային սեփականության իրավունքով, փոխանցել Կեչուտ գյուղի 9-րդ փողոցի 1-ին փակուղու 3-րդ շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:

4. Ալիսա Վարդգեսի Գևորգյանը պարտավոր է ինքնակամ իրականացված շինության օրինականացման համար Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին վճարել 16155 (տասնվեց հազար հարյուր հիսունհինգ) դրամ.

կցակառույցը գտնվում է շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) 13-րդ գոտում, կիրառված գործակիցը՝ 0.1422:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալիսա Վարդգեսի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2026 թ. N 331-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ N 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի N 71-Ա որոշման, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Լարիսա Մակեդոնի Վարդազարյանի կողմից լիազորված անձ Արարատ Հմայակի Խաչատրյանի դիմումը (մտից՝ 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 1608)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ի N 10092026-10-0037 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 2/3 հասցեում գտնվող 22,1 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21,2 քմ, որից շինությունը՝ 5,4 քմ, հարթակը՝ 15,8 քմ) հասարակական նշանակության շինությունը (խանութի մի մասը և հարթակը, այսուհետ՝ շինություն) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 41,3 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Լարիսա Մակեդոնի Վարդազարյանին՝ ի դեմս վերջինիս կողմից լիազորված անձ Արարատ Հմայակի Խաչատրյանի (նույնականացման քարտ՝ 015516529, տրված՝ 15.02.2024 թ. 035-ի կողմից):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական

խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝
   1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ 15057 (տասնհինգ հազար հիսունյոթ) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1673).
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2887,5 (երկու հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) դրամ:

4. Լարիսա Մակեդոնի Վարդազարյանը պարտավոր է վճարել.
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 332760 (երեք հարյուր երեսուներկու հազար յոթ հարյուր վաթսուն) դրամ՝ շինության գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝ 119255 (հարյուր տասնիննը հազար երկու հարյուր հիսունհինգ) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Լարիսա Մակեդոնի Վարդազարյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լարիսա Մակեդոնի Վարդազարյանին՝ ի դեմս վերջինիս կողմից լիազորված անձ Արարատ Հմայակի Խաչատրյանի, որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2026 թ. N 332-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ՏԱՆՈՂ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ջերմուկ համայնքում իրականացվող շինարարական աշխատանքներն ընդունելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 146-147–րդ և 151-րդ կետերին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի գերեզմանատուն տանող աստիճանների կառուցման շինարարական աշխատանքներն ընդունող հանձնաժողովի կազմում ներգրավման ենթակա մարմիններին և սուբյեկտներին urban.e-gov.am համակարգով ներկայացնել դիմում՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար իրենց ներկայացուցչի թեկնածությունն առաջադրելու վերաբերյալ՝ հանձնաժողովի նախագահ նշանակելով համայնքի ղեկավարի տեղակալ Արտուշ Սիմոնյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2026 թ. N 333-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ N 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (ՀՕ-225-Ն) համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ և 18-րդ կետերին համապատասխան, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի բնակիչ Ատոմ Գարսևանի Բարսեղյանի դիմումը (մտից N 1609, 15.09.2026 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Ատոմ Գարսևանի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 26092012-10-0047 վկայական) Գնդեվազ գյուղի 1-ին փողոցի 3-րդ փակուղու N 5 հասցեում գտնվող 1495 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 106,27 քմ ներքին մակերեսով (արտաքին մակերեսը՝ 124,28 քմ) բնակելի նշանակության շինությունը՝ բաց պատշգամբով և աստիճանավանդակով բնակելի տունը (այսուհետ՝ շինություն), համարել օրինական (ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026FYZPPU):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նված շինությունը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278

հաշվեհամարին մուծել 127760 (հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր վաթսուն) դրամ (տարածագնահատման 15-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1028), հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ատոմ Գարսևանի Բարսեղյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2026 թ. N 334-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (ՀՕ-225-Ն) համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ և 18-րդ կետերին և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 5-րդ գլխի պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի բնակիչ Ալբերտ Խաչիկի Մնացականյանի դիմումը (մտից N 1593, 11.09.2026 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Ալբերտ Խաչիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2009 թվականի ապրիլի 7-ի N 2622509 վկայական) Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի N 3 հասցեում գտնվող՝ փաստացի չափագրմամբ 108,8 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 62 քմ ներքին մակերեսով (արտաքին մակերեսը՝ 77,24 քմ) հասարակական նշանակության շինությունը՝ խանութը (այսուհետ՝ շինություն), համարել օրինական (ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026DJQK75):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նված շինությունը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին մուծել

158810 (հարյուր հիսունութ հազար ութ հարյուր տաս) դրամ (տարածագնահատման 15-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1028), հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալբերտ Խաչիկի Մնացականյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2026 թ. N 335-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐՎԱԾ N ՇԹ/705/35848-26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակի միջոցով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տրամադրված N ՇԹ/705/35848-26 շինարարության թույլտվության մեջ դիտարկված վրիպակի ուղղման նպատակով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 31-ի ««ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին շինարարության թույլտվություն տալու մասին» N 293-Ա որոշմամբ տրված N ՇԹ/705/35848-26 շինարարության թույլտվության մեջ (Ձև N 2-3) կատարել հետևյալ փոփոխությունը՝ 2-րդ կետում (շինարարության նորմատիվային տևողությունը) «տարվա» բառը փոխարինել «ամսվա» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2026 թ. N 336-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ Մ-2 ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ) ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Ս. Մկրտչյանի՝ ս/թ սեպտեմբերի 24-ի զեկուցագիրը (մտից N 1670)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքի՝ Մ-2 միջպետական ճանապարհի (Երևանյան խճուղի) հարակից տարածքը բարեկարգելու և սանիտարական մաքրման նպատակով իրականացնել չորացած ծառերի (ուռենիներ, այրված եղևնիներ) հատում:

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին՝ նշված աշխատանքների կատարման հսկողությունը դնելով Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանի վրա:

3. «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ հատման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ վառելանյութը և աշխատանքային գործիքները տրամադրել ՀՈԱԿ-ի միջոցներից, տարածքների մաքրումը կատարել ՀՈԱԿ-ի կողմից՝ համայնքի միջոցների հաշվին, առաջացած փայտանյութը տրամադրել վարչական ղեկավարի գրասենյակին՝ գյուղի անապահով բնակիչներին, որպես վառելանյութ, բաշխելու նպատակով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանին և «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Մ. Աղաջանյանին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2026 թ. N 337-Ա

«ՀԷՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, 98-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով «ՀԷՑ» ՓԲ ընկերության՝ 2026 թվականի օգոստոսի 11-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՀՆ/5671-26 դիմումը(մտից՝ 2026 թվականի օգոստոսի 20-ի N 1423)՝ ***որոշում եմ՝***

1. «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը տալ շինարարության թույլտվություն Ջերմուկ համայնքի բնակիչ Վրթանես Պողոսյանին պատկանող՝ Գնդեվազ գյուղի 12-րդ փողոցի 1-ին փակուղու N 6 հասցեում գտնվող հողամասում էլեկտրամատակարարման համակարգի՝ 100կՎԱ ԿՏԵ-ի տեղադրում, 10կՎ ՕԳՊ-ի, 0.4կՎ ՕԳՄ և 0.22կՎ ՕԳՄ-ի, կառուցման աշխատանքների կատարման համար:

2. «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ որպես շենքերի և շինությունների արդիականացման համար նախատեսված տուրք:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2026 թ. N 338-Ա

«ՀԷՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ԳԵՏԻՔ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ N 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, 98-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով «ՀԷՑ» ՓԲ ընկերության՝ 2026 թվականի օգոստոսի 7-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՀՆ/5545-26 դիմումը(մտից՝ 2026 թվականի օգոստոսի 20-ի N 1422)՝ ***որոշում եմ***՝

1. «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը տալ շինարարության թույլտվություն Գնդեվազ գյուղի Գետիք 1-ին փողոցի N 5 հասցեում գտնվող Վարուժան Վալերիկի Ներսիսյանին պատկանող հողամասում էլեկտրամատակարարման համակարգի՝ 10կՎ ՕԳ-ի և 10կՎ ՄԳ-ի, կառուցման աշխատանքների կատարման համար:

2. «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ որպես շենքերի և շինությունների արդիականացման համար նախատեսված տուրք:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2026 թ. N 339-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի անցկացման կանոնակարգի VII բաժնով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի (այսուհետ՝ Հողամաս) վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման մրցութային հանձնաժողովի՝ մրցույթները չկայացած համարելու մասին 2026 թվականի սեպտեմբերի 25-ի N 4 արձանագրությունը՝ ***որոշում եմ***՝

1. Հաշվի առնելով այն, որ 2026 թվականի սեպտեմբերի 25-ին Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից հայտարարված՝ Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափագրմամբ 50 քմ և 55 քմ մակերեսներով առանձնացված հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցույթների մասնակցության հայտեր չեն ներկայացվել, դրանք համարել չկայացած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2026 թ. N 340-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 22-ի «Լենա Անդրանիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում ինքնակամ բացված պատուհանը և կցակառույցը օրինականացնելու մասին» N 225-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները՝ որոշման

ա/ վերնագրում «ՊԱՏՈՒՀԱՆԸ» բառից հետո ավելացնել «,ՄԵԿ ԴՈՒՌԸ» կետադրական նշանը, թվականը և բառը,

բ/ 1-ին կետում «պատուհանը» բառից հետո ավելացնել «, 1 դուռը» կետադրական նշանը, թիվը և բառը

գ/ 1-ին կետում «2026L8LQHN» չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը փոխարինել «2026NFS6JX» ծածկագրով:

2. Լենա Գրիգորյանը պարտավոր է ինքնակամ բացված դռան օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին մուծել 3206 (երեք հազար երկու հարյուր վեց) դրամ (տարածագնահատման (գտնվելու վայրի) 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.3206):»

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լենա Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 25
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հոկտեմբերի 2026 թ. N 341-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N 17 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

